կատարելու համար, որ կսահմանի XXV համագումարը։ Նրանք այսուհետև ևս արժանավայել ավանդ կներդնեն մեր երկրում կոմունիզմի կառուցման գործում, ամբողջ մոլորակի խաղաղության ու առաջադիմության գործում։

Վ. Ա. Կոտելնիկովի զեկուցումը բազմիցս ընդհատվում էր ծափահարություններով։

* * *

Սովետների երկրի բանվոր դասակարգի անունից սովետական գիտնականներին ողջունեց Մոսկվայի «Սերպ ի մոլոտ» գործարանի ձուլագործ, սոցիալիստական աշխատանքի հերոս Վ. Վ. Կլյուևը, կոլտնտեսային գյուղացիության անունից՝ Կուրսկի մարզի «Ստրանա սովետով» կոլտնտեսության կոմբայնավար, սոցիալիստական աշխատանքի հերոս Ի. Ի. Դուշինը, մտավորականության անունից՝ Մոսկվայի 52-րդ դպրոցի ուսուցչուհի Մ. Պ. Դեմիդովան։

Նրանք խոսեցին այն մասին, որ սովետական ժողովուրդը իրավամբ հպարտանում է իր ակադեմիայով, որը բազմաթիվ վառ էջեր է գրել հայրենական ու համաշխարհային գիտական մտքի տարեգրության մեջ, վստահություն էին հայտնում, որ ակադեմիան, սովետական գիտության բոլոր աշխատողները ՍՄԿԿ XXV համագումարը կդիմավորեն ստեղծագործական նոր հաջողություններով, արժանավայել ավանդ կներդնեն կոմունիստական շինարարության գործում։ Հռետորները կոմունիստական կուսակցությանը, սովետական պետությանը, անձամբ ընկեր Լ. Ի. Բրեժնևին ջերմագին շնորհակալություն էին հայտնում սովետական գիտության զարգացման՝ սոցիալական առաջադիմության այդ կարևոր գործոնի նկատմամբ ցուցաբերվող մշտական հոգատարության համար։

Այնուհետև ելույթ ունեցավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Գ. Կ. Ակոյարիևը և հաղորդեց, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հասցեով ստացվել են բազմաթիվ ողջույններ։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյակին նվիրված հանդիսավոր հոբելյանական նիստի մասնակիցները հսկայական ոգևորությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ հասցեագրված ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին։

(ՏԱՍՍ)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ, ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ

Նշանակալից տարեթվին՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հիմնադրման 250-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի մասնակիցները սովետական բոլոր գիտնականների անունից ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, սովետական կառավարությանը խորին շնորհակալություն են հայտնում կոմունիստական շինարարության գործում գիտությունների ակադեմիայի, ամբողջ սովետական գիտության դերի բարձր գնահատականի համար.

Գիտությունների ակադեմիայի ստեղծումը խոշոր իրադարձություն էր մեր հայրենիքի պատմության մեջ։ Արդեն նախահեղափոխական ժամանակաշրջանում ակադեմիան միավորում էր գիտական ուժերը և նպաստում հետազոտական աշխատանքի զարգացմանը, լուսավորության տարածմանը, արտասահմանյան գիտնականների հետ գիտական կոնտակտների հաստատմանը։ Սակայն ցարական ինքնակալության պայմաններում ակադեմիայի գործունեությունը չէր կարող լայն զարգացում ստանալ։

Գիտության իսկական ծաղկման համար մեր երկրում հիրավի չտեսնված հնարավորություններ ստեղծվեցին մեծ Հոկտեմբերի հաղթանակից հետո։ Գիտական մտքի նվաճումները դարձան աշխատավոր զանգվածների սեփականությունը, սովետական գիտնականները սկսեցին ակտիվորեն մասնակցել նոր սոցիալիստական հասարակարգի կառուցմանը։ Ստեղծվեց գիտության, տեխնիկայի և պրոլետարիատի հուժկու դաշինքը, աշխատանքի ու գիտելիքի դաշինքը, որի մասին երազում էր մեծ Լենինը։

Սովետական պետության գոյության առաջին իսկ օրերից Վ. Ի. Լենինը մշտական ուշադրություն էր նվիրում գիտությունների ակադեմիային, նրա ջանքերը նպատակամղելով երկրի էկոնոմիկայի, կրթության ու կուլտուրայի զարգացման հետ առնչված առավել հրատապ գիտական պրոբլեմների լուծմանը, մեծ ջերմությամբ էր հոգում գիտնականների մասին։

Այսօր, 250-ամյա հոբելյանի օրը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային բարձր պարգևով՝ Լենինի շքանշանով պարգևատրելը առանձնապես թանկ է գիտության բոլոր աշխատողների համար։ Ակադեմիայի վաստակի համաժողովրդական ճանաչումը, կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության, անձամբ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևի ուշադրությունն ու հոգատարությունը գիտնականներին, գիտահետազոտական հիմնարկությունների բոլոր աշխատողներին ոգեշնչում են ստեղծագործական լարված աշխատանքի, նոր մեծագործությունների՝ հանուն գիտության առաջընթացի, ի փառս սովետների երկրի։

Սովետական գիտությունը զարգացել է մեր հայրենիքի անշեղ առաջադիմության հետ միասին։ Գիտությունների ակադեմիան, որը ժամանակին միավորել է լաբորատորիաների համեմատաբար սակավաթիվ մի խումբը, ներկայումս վերածվել է արդիական գիտական հիմնարկությունների խոշորագույն կոմպլեքսի և ստացել լայն ճանաչում։

Ակադեմիայի հոբելյանը Սովետական Միությունում նշվում է որպես գիտության նվաճումների ստուգատես, որպես մեր ամբողջ երկրի տոն։ Սովետական գիտնականները հպարտանում են սովետական հայրենիքի տնտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդման գործում, կուլտուրայի, կրթության ու առողջապահության զարգացման գործում իրենց ներդրած ավանդի համաժողովրդական ճանաչումով։

Կենսագործելով կուսակցության կանխագծումները, ՍՄԿԿ XXIV համագումարի դիրեկտիվները, սովետական գիտնականները ամբողջ ժողովրդի հետ միասին իրենց ուժերը նվիրաբերում են կոմունիստական շինարարության խնդիրների լուծմանը։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գիտնականներն իրենց պարտքն են համարում կենտրոնացնել գիտական ուժերն ու նյութական ռեսուրսները գիտության ու տեխնիկայի զարգացման առավել կարևոր և հեռանկարային ուղղություններում, բարձրացնել գիտական հետազոտություն-

ների արդյունավետությունը, ուժեղացնել արտադրության, պրակտիկայի հետ գիտության կապերը։

Ֆունդամենտալ գիտական հետազոտությունների հաջող զարգացումը սկզբունքորեն նոր հնարավորություններ է ստեղծում այնպիսի կարևորագույն պրոբլեմների լուծման համար, ինչպիսիք են տիեզերական տարածության, համաշխարհային օվկիանոսի, երկրագնդի ընդերքի, էներգետիկ հսկայական ռեսուրսների յուրացումը, բնական հարստությունների պահպանումն ու բազմապատկումը, նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի, նոր նյութերի ու կոնստրուկցիաների, տրանսպորտի ու կապի նոր միջոցների ստեղծումը, գյուղատնտեսության արդյունավետության հետագա բարձրացումը, բժշկության ու առողջապահության առաջադիմությունը։ Հասարակական զարգացման պրոցեսների ճանաչումը օգնում է կատարելագործելու արտադրական հարաբերությունները, ժողովրդական տնտեսության և կուլտուրական շինարարության կառավարումը։

Գիտական հետազոտությունների արդյունքները սոցիալիզմի պայմաններում օգտագործվում են ի բարօրություն աշխատավորների, հանուն ամբողջ հասարակության, յուրաքանչյուր մարդու։ Սովետական գիտությունը ծանրակշիռ ավանդ է ներդնում գիտելիքների համաշխարհային գանձարանում, ծառայում է մարդասիրության և սոցիալական առաջադիմության իդեալներին։

Սովետական գիտնականները հսկայական նշանակություն են տալիս կուսակցության XXIV համագումարի ընդունած խաղաղության ծրագրի հետևողական կենսագործմանը։ ՍՍՀՄ-ի գիտնականները այսուհետև ևս ակտիվորեն կնպաստեն եղբայրական սոցիալիստական երկրների սերտ համագործակցությանը, ժողովուրդների բարեկամության ու համագործակցության ամրապնդմանը, սոցիալական տարբեր կարգեր ունեցող պետությունների խաղաղ զոյակցության լենինյան սկզբունքների հաստատմանը։

Սովետական խաղաղասիրական արտաքին քաղաքականության տպավորիչ հաջողությունները, մեր երկրի ժողովրդական տնտեսության վստահ և պլանաչափ զարգացումը, սովետական ժողովրդի բարեկեցության ու կուլտուրայի աճը, լենինյան կուսակցության իմաստուն քաղաքականությունը Սովետական Միությունում հիանալի պայմաններ են ստեղծում ստեղծագործական աշխատանքի համար։ Բոլոր գիտական հիմնարկությունների կոլեկտիվները տոգորված են այն ձգտումով, որ կուսակցության ու կառավարության հոգատարությանը և ուշադրությանը պատասխանեն հետազոտական աշխատանքում, գիտատեխնիկական առաջադիմության ասպարեզում, ՍՄԿԿ XXV համագումարը արժանավայել դիմավորելու սոցիալիստական մրցության մեջ ձեռք բերած նոր հաջողություններով։

Կուսակցությունն ու ժողովուրդը կարող են վստահ լինել, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գիտնականները, սովետական գիտության բոլոր աշխատողները այսուհետև ևս իրենց բոլոր ուժերն ու գիտելիքները, իրենց ստեղծագործական եռանդը կնվիրաբերեն սոցիալիստական հայրենիքին, կոմունիզմի գործին։

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ, ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ